

ԵՆԹԱԿԱՅԻ ՈՒ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ
ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Քաճախի. գիտ. դոկտոր Մ. Ե. ԱՍԱՏՐՅԱՆ

Օժտված լինելով բառերի շարահյուսական հարաբերություններն արտահայտող հոլովական ձևերի ու կապերի, այլև խոնարհման ձևերի ճոխ համակարգով՝ հայերենը այնպիսի լեզու է, որում բառերի շարադասությունը մեծ մասամբ ազատ է կամ համարյա ազատ է և ունի միայն առանձին սահմանափակումներ: Հայերենի այս հատկությունը թույլ է տալիս նույն միտքն արտահայտել նախադասության անդամների տարբեր դասավորությամբ:

Այսպես, բառերի ազատ շարադասության պայմաններում (1) նա եկավ տուն նախադասությունը կունենա շարադասական հետևյալ տարբերակները. (2) նա տուն եկավ. (3) եկավ նա տուն. (4) եկավ տուն նա. (5) Տուն եկավ նա. (6) Տուն նա եկավ: Ուրեմն՝ երեք բառից բաղկացած նախադասությունը ազատ շարադասությամբ կունենա շարադասական վեց տարբերակ, որոնց թիվը մաթեմատիկորեն որոշվում է նախադասությունը կազմող բառերի քանակն արտահայտող թվերի հաջորդական բազմապատկմամբ, այսինքն՝ $1 \times 2 \times 3 = 6$:

Ըստ այդմ՝ 4, 5, 6 և 7 բառերից կազմված նախադասությունները բառերի ազատ դասավորության պայմաններում կունենան շարադասական տարբերակների հետևյալ քանակը:

ա) նա երեկ եկավ տուն $(1 \times 2 \times 3 \times 4) = 24$:

բ) նա երեկ կեսգիշերին եկավ տուն $(1 \times 2 \times 3 \times 4 \times 5) = 120$:

գ) նա երեկ կեսգիշերին ժողովից եկավ տուն $(1 \times 2 \times 3 \times 4 \times 5 \times 6) = 720$:

դ) նա երեկ կեսգիշերին ժողովից մենակ եկավ տուն $(1 \times 2 \times 3 \times 4 \times 5 \times 6 \times 7) = 5040$:

Ինչքան էլ որ աներևակայելի լինի «նա երեկ կեսգիշերին ժողովից մենակ եկավ տուն» նախադասության շարադասական տարբերակների ահեղ քանակը (5040), համենայն դեպս դա տեսականորեն հնարավոր է (չնայած որ դրանց մի մասը կարող է երբեք չգործածվել) և բացատրվում է մի պարզ հանգամանքով, այն է՝ այս նախադասությունը կազմող բառերը ձևով և իմաստով այնպիսիք են, որ ինչպես էլ դասավորվեն, ինչ շարադասություն էլ որ ունենան, նույն քերականական-շարահյուսական հարաբերության մեջ կմտնեն միայն եկավ ստորոգյալի նկատմամբ, ինչպես և վերջինս, ինչ շարադասությամբ էլ որ հանդես գա, նույն հարաբերության մեջ կմնա այս նախադասությունը կազմող մյուս բառերի նկատմամբ:

Այժմ վերցնենք հետևյալ նախադասությունը. «Դալար ծառերի ճյուղերը քամուց օրորվեցին»: Այս նախադասությունը բաղկացած է հինգ բառից, բայց այս դեպքում չենք կարող ասել, թե դրան ևս հատուկ են բերված նախորդ նախադասություններում իրականանալի՝ բառերի բոլոր տեղափոխությունները, որովհետև բառերի հարաբերություններն այստեղ այլ բնույթի են, այն է՝ օրորվեցին ստորոգյալի նկատմամբ հարաբերության մեջ են նյութերը և լամուց բառաձևերը միայն. նյութերը բառաձևի նկատմամբ հարաբերության մեջ է ծառերի բառաձևը, իսկ սրա նկատմամբ էլ՝ դալար ձևը: Այս պատճառով էլ այս նախադասությունը կազմող բառերի շարադասությունը մենք ազատորեն փոխել չենք կարող, որովհետև հակառակ դեպքում կամ նախադասության միտքը կաղավաղվի, կամ նախադասության մեջ կառաջանան անմիտ ու անիմաստ բառակապակցություններ, ինչպես՝ «Ծառերի դալար ճյուղերը քա-

մուց օրորվեցին»։ «Ծառերի ձյուղերը դալար քամուց օրորվեցին»։ «Ծառերի ձյուղերը քամուց դալար օրորվեցին»։

Վերևում բերված և այս օրինակները որոշակի գաղափար են տալիս այն մասին, թե ինչպես պետք է հասկանալ այն սահմանումը, թե հայերենում նախադասության անդամների շարադասությունը համեմատաբար ազատ է։

Անդրադատնալով նույն նախադասության շարադասական տարբերակներին՝ պետք է նշել, որ, որպես կանոն, դրանցից մեկը՝ համապատասխանելով խոսքի սովորական ընթացքին, հիմնականն ու սովորականն է լինում, իսկ մյուսները հանդես են գալիս որպես նրա շրջված, փոփոխված ձևեր։ Ըստ այդմ՝ նախադասությունը կազմող բառերի շարադասությունը լինում է երկու տեսակ՝ սովորական և շրջուն, օրինակ՝ «Նրանք այսօր հանգստանում են» — սովորական շարադասություն, «Նրանք են այսօր հանգստանում»։ «Նրանք այսօր են հանգստանում» և այլն — շրջուն շարադասություն։

Շրջուն շարադասության ժամանակ բառերի բերականական-շարահյուսական հարաբերությունները մնում են նույնը, բայց փոխվում է նախադասության արտահայտության ձևը, որին ուղեկցում է նաև նախադասության իմաստային երանգի փոփոխությունը։ Իսկ դա դրսևորվում է նրանով, որ նախադասության մեջ մտքի արտահայտման տեսակետից կարևոր բառը՝ իր վրա կրելով նախադասության գլխավոր կամ տրամաբանական շեշտը, իր սովորական տեղից առաջ է շարժվում կամ ազդում է մյուս բառերի շարադասության վրա։

Սովորական շարադասության ժամանակ նախադասության գլխավոր կամ տրամաբանական շեշտը զգայելի չի լինում կամ թույլ կերպով արտահայտվելով՝ ընկնում է սովորաբար ստորոգյալի վրա, օրինակ՝ «Ուսանողները պարապում են գրադարանում»։ Բայց, ասենք, կենդանի խոսքում անհրաժեշտություն ու կարիք է զգացվում այս նախադասության արտահայտած մտքի սահմաններում ընդգծել ուսանողները կամ զբաղաբանում բառերի կարևորությունը։ Դա կատարվում է շրջուն շարադասության, դրա հետ նաև հեն-լեկանգի միջոցով, այն է՝ ընդգծվող բառի ուժգին ու համեմատաբար դանդաղ արտասանությամբ, ինչպես՝ «Ուսանողներն են պարապում գրադարանում» կամ «Ուսանողներն են գրադարանում պարապում»։ «Գրադարանում են պարապում ուսանողները» կամ «Գրադարանում են ուսանողները պարապում»։

Այս կապակցությամբ հատուկ պետք է շեշտել հայերենին հատուկ մի օրինաչափություն, ըստ որի շրջուն շարադասության ժամանակ եմ բայն անպայմանորեն դրվում է տրամաբանական շեշտ կրող բառից անմիջապես հետո։ Այսպես, «Աշակերտը լուծում է խնդիրը» նախադասության տրամաբանական շեշտը, որպես կանոն, կրնի լուծում է ստորոգյալի վրա։ Եթե այդ շեշտը տեղափոխվի մյուս բառերի վրա, կստացվեն հետևյալ շրջուն շարադասություններ՝ Աշակերտն է լուծում խնդիրը/Աշակերտն է խնդիրը լուծում։ Խնդիրն է լուծում աշակերտը/Խնդիրն է աշակերտը լուծում։ Ուրեմն եմ բայը շրջուն շարադասության ժամանակ հարում է տրամաբանական շեշտ կրող բառին։ Սա ժամանակակից հայերենի համար երևի պարտադրական մի օրինաչափություն է։

Այս ընդհանուր դիտողություններից հետո անցնենք ենթակայի և ստորոգյալի շարադասությանը։

Ժամանակակից հայերենի սովորական շարադասությամբ ենթական դրվում է ստորոգյալից առաջ, ինչպես՝ «Զմեռը եկավ»։ «Երբը կարճացան»։ «Եղանակը ցրտեց»։ «Գետերը սառցակալեցին»։ «Լույսը բացվում է»։ «Բնությունն արթնանում է»։ «Արևը լուսավորում է»։ «Ծաղիկները ծաղկում են» և այլն։

Այս կառուցվածքի նախադասություններում ենթական հանդես է գալիս որպես խոսքի ելակետ (թեմա), իսկ ստորոգյալը՝ այն նորը, որ հաղորդման բուն նպատակն է (ռեմա)։ Միաժամանակ պետք է նշել, որ այսպիսի կառուցվածքում տրամաբանական շեշտը, որ թույլ է արտահայտված լինում, սովորաբար ընկնում է ստորոգյալի վրա։

Ճիշտ է, շենթակա—ստորոգյալ» շարադասություն ունեցող նախադասություններում տրամաբանական շեշտը կարող է ընկնել նաև ենթակայի վրա, բայց այդ դեպքում այն ուժեղ է լինում և երկբաղադրիչ ստորոգյալի դեպքում անգնցնում է նրա բաղադրիչների շարադասության փոփոխությանը, ինչպես՝ «Ձմե՛ռը եկավ»։ «Նշանակը ցրտեց»։ «Լո՛ւսն է բացվում»։ «Ինությունն է արթնանում» և այլն։ Հասկանալի է, որ այս դեպքում ենթական դառնում է հատորգման հիմնական նպատակը, իսկ ստորոգյալը՝ հաղորդման ելակետը։

Անդրադառնալով այսպիսի կառույցների բովանդակությանը՝ պետք է նշել, որ «ենթակա—ստորոգյալ» շարադասությամբ նախադասությունները կիրառվում են անձերի, իրերի, երևույթների գործողությունները և նրանց ունեցած կամ նրանց հատուկ հատկանիշներն արտահայտելու ու բնութագրելու համար, օրինակ՝ «Ավի՛ն բերդանը մեկնեց, և երբ արթը թրտեղում դեմ գցեց ուսի փաշտը, շուրճտանի դուռավ, բերդանը ուրտաց, կրակոցի ձայնին ձուրեմ արձագանք տվին, ծառի ճյուղերից ձյուն թափվեց։ Արթը ունաց։ Բերդանի ծխի շիջից Ավին տեսավ, թե ինչպես արթը մի ուտյուն արեց, թաթերը բերդանի փողին մեկնեց» (Ա. Բակունց)։ «Կատուն վերջին անգամ ցնցվեց և անշարժացավ։ Աղավնները շարունակում էին տագնապահար դես ու դեն թռչել։ Ավազյանը վտրձեց մեկին բռնել։ Նա ուժգին թափահարեց թևերն ու դուրս արձավ Ավազյանի դողդողուն ձեռքերից։ Աղավնների խուճապն ազնվի սաստկացավ։ Սալսափից խելագարված թռչունները երամով նետվում էին դեպի վեր, դիպչում տանիքի ցածրիկ առաստաղին ու կրկին ետ թավովում։ Սեկը թռչելիս բախվեց ճրագին ու հանգցրեց այն։ Մի ուրիշը դիպավ Սվազյանի երեսին։ Ավազյանը բռնեց նրան և վիզը տեղն ու տեղը դուրս փախեց» (Ն. Զարյան)։

Ստորոգյալը հաճախ շարադասվում է ենթակայից առաջ, և այսպիսով ստացվում է շրջուն շարադասություն, ինչպես՝ «Յկավ ձմեռը»։ «Կարճացան օրերը»։ «Սառցակալեցին գետերը»։ «Բացվում է լույսը»։ «Լուսավորում է արևը»։ «Արթնանում է բնությունը»։ «Ջինջ է երկինքը»։ «Գնդեցիկ է կյանքը»։ «Բարի է Արամը»։ «Բժիշկ է Լոբալյուս» և այլն։

Այս տիպի նախադասությունների տրամաբանական շեշտը ըստ հաղորդման նպատակադրման ազատորեն կարող է ընկնել և՛ ստորոգյալի, և՛ ենթակայի վրա, ինչպես՝ Յկավ՝ ձմեռը/Յկավ՝ ձմեռը. Սառցակալեցին՝ գետերը/Սառցակալեցին՝ գետերը։ Այսպես է անգամ երկբաղադրիչ (օժանդակ բայ ունեցող) ստորոգյալների դեպքում, օրինակ՝ Գալիս է ձմեռը/Գալիս է ձմեռը. Սառցակալում են գետերը/Սառցակալում են գետերը. Ջինջ է երկինքը/Ջինջ է երկինքը և այլն։ Պետք է նկատի ունենալ, որ այս կառուցվածքի նախադասություններում ևս տրամաբանական շեշտ կրող ենթական կամ ստորոգյալը հանդես են գալիս որպես հաղորդման նպատակ։

Գալով բովանդակությանը՝ պետք է նշել, որ «ստորոգյալ+ենթակա» շարադասությամբ նախադասությունները կիրառվում են սովորաբար այն դեպքերում, երբ հարկավոր է ուշադրությունը սեռել իրար ևստից զարդացող գործողությունների, ընթացքների, դեպքերի վրա, ինչպես՝ «Գոռում են, դուգում Թրմկա ձուրերը, Կանգնած է Թաթուլ շահի հանդիման. Զարկում են, զարկվում դուշման գոբերը, Արյունը հոսում էն Քոի նման. Լոգում է, սշուղն իր շահի սերը, Անհուն գանձերը ու փառքն անսահման...»։ «Դարձավ իր կովից իշխան Բաթուլը, Դարձավ հաղթական իրեն զորքի հետ, Սրբեց, պատյանը գրավ կեռ թուրը, Ցնծության ձայնից դողաց Թրմկաբերդը։ Խնդույք է սարքել Թրմկա տիրուհին, Ցերեկ է արել խավար գիշերը, Հեղեղի նման հոսում է գինին, Ու ֆեֆ է անում Զսվախի տերը» (Հ. Բումանյան)։ «Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, բերում է ափերը, հղկում հունի կապույտ որձաքարը։ Իր նեղ հունի մեջ գալստվում է Բասուտա գետը, առև նրա սպիտակ փրփուրի տակ ոռոգում են հագար գամփոներ, կրծում քարի շղիաները» (Ա. Բակունց)։ «Բարձրագահ լեռներում ուրտաց վայրի փամին։ Խոր-խորանիքի և Ապահունիքի միջև լեռնանցքով եղում էր Ատոմի գորագունդը,

որի մեջ լցվել էին նաև Ռշտունյաց, Աթրունյաց և Մոկաց լոկառները» (Գ. Դեմիրճյան)։

Պետք է նշել, որ կրկնվող ստորոգյալների նախադաս կիրառությունը խոսքին հատուկ հուզականություն է հաղորդում, ինչպես՝ «Կանչում է կրկին, կանչում անդադար էն չքնաղ երկրի կարոտը անքուն, Ու թևերն ահա փռած տիրարար» Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն» (ՀԹ)։ Մխում էին և մեծաշեն բաղաձևերը, Մխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր էջմիածնի վանքը»։ «Դատարկ էին քաղաքները, դատարկ էին գյուղերը, դատարկ էին և ճանապարհները»։ «Անցան օրեր, անցան շաբաթներ, անցան ամիսներ...»։ «Կերտեց սենյակներ, կերտեց դահլիճներ, կերտեց պատկերազարդ սրահներ» (Րաֆֆի)։

Այն էլ պետք է ասել, որ, ինչպես բերված օրինակների մի մասն է յուրյ տալիս, Լեոնակայի և ստորոգյալի շարադասության համար կարևոր նշանակություն ունի ստորոգյալի լրացումների՝ խնդիրների և պարագաների գրաված դիրքը։ Եթե դրանք ընկնում են նախադասության սկզբում, ապա, որպես կանոն, դրանցից հետո շարադասվում է ստորոգյալը և այնուհետև ենթական, ինչպես՝ «Ամենուրեք տիրում էր տխուր, անապատական դատարկություն»։ «Արածանիի ավերի մոտ ապրում էր և մի այլ ժողովուրդ» (Ր)։ «Արև մի կեսօր Կաթավարկերի քարափով բարձրանում էին երեք ձիավոր»։ «Մակաղած ուխտարների բողբի վրա նստեց գիշերային խոնավությունը» (ԱԲ)։ «Երեք տարի առաջ մահացել էր Շմավոնի կինը» (ՆԶ)։ «Երկրում ստեղծվեց մի անորոշ, անտանկի վիճակ»։ «Մի տանից բակ դուրս եկավ մի կին՝ մեջքին սուր, թևին վահան» (ԴԴ)։ Սակայն այս օրինակներում վերաբերում է նաև ստորոգյալի (բայի) լրացումների շարադասությանը, որի մասին խոսք կլինի ստորև։

Մինչև այժմ ենթակայի և ստորոգյալի շարադասությունը ներկայացնելիս ստորոգյալը դիտվել է որպես շարահյուսական մեկ միավոր։ Բայց մենք գիտենք, որ ստորոգյալները հաճախ արտահայտվում են ոչ թե մեկ, այլ մեկից ավելի միավորներով։ Այսպես են գլխավոր ու երկրորդական վերլուծական ժամանակներով ու հարադրական բայերով արտահայտված ստորոգյալները, այլև անվանաբայական ստորոգյալները, ինչպես՝ գնում է, գնացել է, գնալու է, գրելալիս է լինում, գնացած է եղել, ներս է մտնում, դուրս է եկել, բարի է, բարի է, բարի է և այլն։ Ստորև ներկայացվում է այսպիսի ստորոգյալների բառադարձիկների իրար և նախադասության մյուս անդամների նկատմամբ ունեցած դիրքը։

ա) Սովորական շարադասության դեպքում գլխավոր վերլուծական ժամանակներով արտահայտված ստորոգյալներում օժանդակ բայն ընկնում է դերբայից հետո, օրինակ՝ «Աշակերտը խնդիրը լուծում է, լուծել է, լուծելու է»։ Մակայն ժխտականի դեպքում օժանդակ բայը, որը համարյա միշտ շեշտված է, դրվում է դերբայից առաջ, օրինակ՝ «Աշակերտը խնդիրը չի լուծում, չի լուծել, չի լուծելու»։

բ) Երկրորդական վերլուծական ժամանակներով արտահայտված ստորոգյալներում նախ դասավորվում են անկատար, հարակատար ու ապառնի դերբայները, որոնց հետևում են լինել բայի խոնարհման ձևերը, ըստ որում՝ եթե դրանք բաղադրյալ են, ապա օժանդակ եմ բայն ընկնում է լինել բայի դերբայներից առաջ, ինչպես՝ «Նա պարապելիս կլինի, գնացած կլինի»։ «Նա պարապելիս է լինում, գնալիս է լինում»։ «Նա գնացած է եղել, եկած է եղել» և այլն։

Հարկ ենք համարում նշելու, որ Մ. Աբեղյանը այս վերջին բառադասությունները համարելով շրջուն՝ կանոնավոր է համարում «Նա գնացած լինում է, եկած է եղել է» և նման բառադասությունները, որոնցում եմ օժանդակ բայը հաջորդում է լինել բայի դերբայական ձևերին։ Այս հարցի մասին նա գրում է. «Այս վերջին կանոնավոր շարադասությունը՝ գնացած լինում եմ, տեսած եղել է, քիչ է գործածվում, որովհետև սակավադեպ կարիք է զգացվում օժանդակ բայը շեշտելու։ Սովորաբար շեշտվում է խոնարհվող բայի դերբայը, որի հետևից, շրջումի ընդհանուր կանոնով, դրվում է եմ բայը՝ գնացած եմ լինում, տես-

սած է եղել, և այս շրջումով ձևերն ավելի գործածական լինելով՝ դարձել են այժմ սովորական, այսինքն՝ շատ գործածվող ձևեր»¹:

գ) Հարադրական բայերով արտահայտված ստորոգյալների շարադասությունը նույնն է երկրորդական վերլուծական ժամանակներով արտահայտված ստորոգյալների հետ, այսինքն՝ սկզբում դրվում են հարադիրները, որոնց հետևում են բուն բայի խոնարհման ձևերը՝ բաղադրյալ ժամանակներում օժանդակ բայի նախադաս դասավորությամբ, ինչպես՝ «նա ներս մտավ, ներս մտնի, ներս կմտնի, ներս է մտնում, ներս է մտել, ներս է մտնելու» և այլն:

դ) Անվանաբայական ստորոգյալներում ստորոգելիներն ու ստորոգելիական վերադիրները բռնում են դերբայների տեղը (ըստ ա և բ կետերի), ինչպես՝ «նա բարի է. բարի էր. ուսուցիչ է, ուսուցիչ էր». «նա փոքր է լինում, փոքր է եղել». «Ջուրը գոլորշի դարձավ, գոլորշի է դառնում, գոլորշի էր դառնում» և այլն:

Դերբայների և նմ օժանդակ բայի շարադասության համար պետք է նկատի ունենալ նաև հետևյալը: Երբ անհրաժեշտություն ու կարիք է զգացվում շեղտելու նախադասության ոչ թե ստորոգյալը, այլ մյուս անդամները, նմ բայը դրվում է այդ շեղտված անդամներից անմիջապես հետո: Այդ դեպքում դերբայները կա՛մ դրվում են անմիջապես օժանդակ բայի հետևից, կա՛մ նրանից բաժանվում նախադասության այլ անդամներով, երբեմն էլ ընկնում են նախադասության վերջը: Այսպիսով ստացվում են վերլուծական ժամանակներով արտահայտված ստորոգյալների շրջուն շարադասության ձևեր, օրինակ՝ «Աստղերն են ժպտում լուսեղեն նազով, Կանաչ դաշտերը մութն է համբուրում». «Գիշերվա հովն էր լալիս դաշտերում, Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ, Մենակությունն էր քարի պես լուում». «Ջուրն գիշերն է մեղմորեն լնկնում Եվ մեծ քաղաքի դեմքը մշուշում». «Ամենուրեք մի կարոտ ես դու նետել». «Դու ես հյուսում աստղացանցը ոսկեթել, Գիշեր ու զօր կյանքը դու ես զարդարում». «Իմ սրտում էլ ես թևերդ փռել, Իմ հոգում էլ ես հրդեհել նոր սեր». «Հողմն է հեկեկում անունը վիհերում, Օ՛, անհուն գիշեր, քեզ ո՞վ է փռել. Ինչո՞ւ է շուրջս աշխարհը լուում, Ո՞վ է իմ հոգու լույսերը մարել» (Վ. Տերյան): Այսպիսի շրջման ժամանակ բայի հարադիրը, որպես կանոն, անբաժան է մնում դերբայից և չի կարող ընդմիջվել նախադասության այլ անդամներով, ինչպես՝ «Երիտասարդներն են հարսանիքում լավ պար եկել». «նա է երեսփային գլխի գցել». «Բանվորներն են շաբաթօրյակի դուրս եկել» և այլն:

Այժմ խնդիրների և պարագաների շարադասության մասին:

Սահմանելով ժամանակակից հայերենի նախադասության անդամների շարադասության հիմունքները՝ Մ. Աբեղյանը նշում է, որ սովորական շարադասության մեջ բայը (իմա՝ բայ-ստորոգյալը), որ ամենից գերադաս բառն է, դրվում է նախադասության վերջում. մյուս բառերը, դրանց թվում նաև ենթական, իբրև բայի լրացումներ, ընկնում են բայից առաջ: Ըստ այդմ՝ ա) մակբայը, այսինքն՝ պարագան, դրվում է անմիջապես բայի վրա առաջից, օրինակ՝ Աստղերը պայծառ փայլում են. բ) խնդիրները, և՛ չափասարաշեղտ են, շարադասվում են սովորաբար ենթականի ու բայ-ստորոգյալի միջև «բոլորովին առաջ ձևով. այն կարգով, որով գաղափարները ծնվում են խոսողի մտքի մեջ», օրինակ՝ Սա դիրքը նրան տալիս եմ, բայց նա չի առնում. Սա նրան գիրքը տալիս եմ: Բայց եթե խնդիրներից մեկնումեկը ավելի գորեղ է շեղտվում, քան մյուսները, այն ժամանակ դորեղ շեղտվածը դրվում է սովորաբար բայի մոտ, օրինակ՝ Սա գիրքը նրա՛ն տվի. Սա նրան գիրքը տվի. Նա նամակը հորի՛ց ստացավ. Նա հորից նամա՛կ ստացավ²:

Ըստ այս ընդհանուր դրույթի՝ «նա խոստովանում է իր հանցանքը». «Օտարականը վայր դրեց իր պարկը, ցած բերեց իր ուսից գործիքները, մոտեցավ թոռին». «Ջուրը կաթկթում էր միակերպ, անվերջ ճլփոցով» և նման նախադասությունների շարադասությունը համարելով շրջուն՝ Մ. Աբեղյանը միա-

¹ Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1965, էջ 533:

² Հենց նույն տեղում, էջ 533—534:

ժամանակ գրում է նաև հետևյալը. «Այսպիսի շրջումը և կանոնավոր շարադասութիւնը մեծ մասամբ հավասարազոր են (ընդգծումը մերն է—Մ. Ա.): Այս պատճառով հաճախ սովորական շարադասութեան տեղ կամ նրա հետ անխտիր փոխանդու գործածվում է այս շրջուն ձևը, որով խոսքն ավելի բազմազանութիւն է ստանում. երբեմն նույնիսկ շրջուն ձևի մեջ բայն ավելի թեթև է շեշտվում, քան կանոնավոր շարադասութեան մեջ...: Հմմտ. օրինակ՝ սովորական շարադասութիւն—*Ես գիրքը նրան տալիս եմ. նա տուն գնում է. Զուրը գոլորշի դառնում է. Ես գնալ ուզում եմ. շրջուն շարադասութիւն—Ես գիրքը տալիս եմ նրան. նա գնում է տուն. Զուրը դառնում է գոլորշի և բարձրանում է վեր. ես ուզում եմ գնալ»³:*

Եթե խնդիրների ու պարագաների շարադասութիւնը բայից հետո այնպիսի շրջում է, որը «մեծ մասամբ հավասարազոր է կանոնավոր շարադասութեանը», շրանից ինքնին բխում է, որ դա շրջում էլ չէ, այլ սովորական բառադասութիւն, ինչպես հենց ցույց են տալիս իր՝ Մ. Արեղյանի բերած օրինակները:

Հարցի այսպիսի լուծումից հետո հեշտ է սահմանել հետևյալ ընդհանուր կանոնը. ժամանակակից հայերենում խնդիրների ու պարագաների հաստատուն դասավորութիւնը չկա, և ըստ խոսքի բնույթի, նախադասութեան կառուցվածքի, տրամաբանական շեշտի, հաղորդման նպատակադրման և այլ գործոնների, որոնք հայ բերականագիտութեան մեջ բիշ են ուսումնասիրված, խնդիրներն ու պարագաները կարող են բայից և՛ առաջ, և՛ հետո շարադասվել՝ Մ. Արեղյանի լրատկրով ասած, «այն կարգով, որով գաղափարները ծնվում են խոսողի մըտքի մեջ»:

Եվ իրոք, դիրքը կարգաց/կարգաց գիրքը, ծառին մոտեցավ/մոտեցավ ծառին, սղոցով կտրեց/կտրեց սղոցով, ընկերներից հեռացավ/հեռացավ ընկերներից, տուն գնաց/գնաց տուն, համբերութեամբ լսեց/լսեց համբերութեամբ, երեկոյան եկավ/եկավ երեկոյան—բառադասութիւններից երկուսն էլ ժամանակակից հայերենում հավասարազոր են ու կանոնավոր:

Այսպես լինելով հանդերձ՝ շարահյուսական այս զուգահեռ ձևերի միջև, տրամաբանական շեշտի հետ կապված, կա նախադասութեան իմաստային երանդի հետևյալ տարբերութիւնը:

Առաջին ձևերում տրամաբանական շեշտը, որը քիչ թե շատ զգալի է, սովորաբար ընկնում է խնդիրների և պարագաների վրա, ինչպես Գի՛րքը կարգաց. Մառի՛ն մոտեցավ. Տո՛ւն գնաց. Համբերութեամբ՝ լսեց: Երկրորդ ձևերում տրամաբանական շեշտը, որն ավելի թույլ է, ըստ հաղորդման նպատակադրման կարող է և՛ ստորոգյալի, և՛ խնդիրների ու պարագաների վրա ընկնել. ինչպես՝ Կարդաց՝ գիրքը/Կարդաց գի՛րքը. Մոտեցավ՝ ծառին/Մոտեցավ ծառի՛ն. Լսեց՝ համբերութեամբ/Լսեց համբերութեամբ. Գնաց՝ տուն/Գնաց տո՛ւն: Վերլուծական ժամանակներով արտահայտված ստորոգյալների դեպքում ևս խնդիրներն ու պարագաները կարող են շարադասվել բայից և՛ առաջ, և՛ հետո, ինչպես՝ Գիրքը կարդում է/Կարդում է գիրքը. Մառին մոտենում է/Մոտենում է ծառին. Սղոցով կտրում է/Կտրում է սղոցով. Ընկերներից հեռանում է/Հեռանում է ընկերներից. Տուն գնում է/Գնում է տուն⁴. Համբերութեամբ լսում է/Լսում է համբերութեամբ. Երեկոյան գալիս է/Գալիս է երեկոյան:

Բայց քանի որ, ինչպես նշեցինք, խնդիրների ու պարագաների նախադաս կիրառութեան դեպքում տրամաբանական շեշտը սովորաբար ընկնում է շրանց վրա, և քանի որ եմ բայը որպես կանոն հարում է տրամաբանական շեշտ կրող բառին, ուստի և եմ բայը այսպիսի շարադասութեան ժամանակ դերբայից առաջ է ընկնում՝ դրվելով խնդիրներից ու պարագաներից անմիջաբար հետո, օրինակ՝ Գիրք է կարդում. Մառին է մոտենում. Սղոցով է կտրում. Տուն է գնում. Համբերութեամբ է լսում և այլն: Այսպիսով ստացվում է

³ Նույն տեղում, էջ 534—535:

⁴ Տուն գնում է կառույցի մեջ ստորոգյալն ունի ընդհանուր, իսկ Գնում է տուն կառույցի մեջ՝ կոնկրետ ներկայի իմաստ: Հմմտ. օրինակ՝ Նա ընկերը տուն գնում է և Նա գնում է ընկերուղ տուն:

վերլուծական ժամանակներով արտահայտված ստորոգյալի շրջուն շարադասության ձև, որով ուժգնացվում է խնդիրների և պարագաների տրամաբանական շեշտը:

Մի կողմ թողնելով կաղապարային օրինակները՝ վերցնենք Րաֆֆու «Սամվել», Շիրվանզադեի «Քառոս» և Ն. Զարյանի «Հացավան» վեպերի սկիզբների հետևյալ անընդմեջ հատվածները և տեսնենք, թե բայերի նկատմամբ նախադաս և ետադաս կիրառության ինչ հաճախականություն ունեն խնդիրներն ու պարագաները կապակցված խոսքաշարում:

1. Լուսնի եղջյուրը ծածկվեցավ Քարթե լեռան ետևում, և Տարոնը ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ: Ոչ մի աստղ այդ գիշեր էր երևում: Երկինքը պատած էր մոխրագույն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դեպի կրկուր և Նեմրուժ լեռների կողմերը և, այնտեղ կուտակվելով, քանձառանալով, միգային-սև կերպարանք էին ստանում: Այդ կողմից երբեմն փայլատակում էր կայծակը, և լսելի էր լինում որոտման խուլ դղրդյուն, որ գուշակում էր հորդ անձրև:

2. Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր: Յոթ օր տասը նա իր նոր կառուցվող տասնումեկերորդ տան վրա արհեստավորներին պատվերներ տալիս մարմնի սեղ զգաց անսովոր ցուրտ, եկավ տուն, պառկեց անկողին ու այլևս չկարողացավ վեր կենալ: Բժիշկները մաքրում ուշադիր քննեցին և միաձայն հաստատեցին թոքերի բորբոքում: Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ ֆաղափում:

3. Արևի շողը դիպավ Լևոնի աչքերին: Նա վեր ցատկեց, նստեց անկողնի մեջ ու դուրս նայեց լուսամուտից՝ զգալով անորոշ մի կսկիծ: Մարալանջերն արդեն սևացել էին: Ձյունը նահանջում էր դեպի հեռավոր գագաթները: Դաշտերի համատարած սևության մեջ տեղ-տեղ միայն մնացել էին ձյունի կղզիներ: «Վաղվանից պետք է դուրս գալ...», — արագ վճռեց Լևոնը և հագավ թանձր մահուդե վերնաշապիկն ու գալիֆեն: Դրսում մի կով բառաչեց՝ քալ ու երկար: Արևն ամբողջովին դուրս եկավ լեռան քիկունքից և սկսեց բարձրանալ՝ կարծես անիվի պես արագ պտտվելով: Այդ ի՞նչ կսկիծ էր: Այդպիսի կսկիծով ֆնից դարձնում են այն մարդիկ, որոնք նախորդ օրը կորցրել են թանկագին մի բան կամ գործել են ծանր մի հանցանք:

Այս հատվածներում գործածված խնդիրների ու պարագաների՝ բայի ներկատմամբ ունեցած շարադասական պատկերը հետևյալն է՝

	Խնդիրներ		Պարագաներ	
	Նախադաս	ետադաս	Նախադաս	ետադաս
«Սամվել»	1	3	3	3
«Քառոս»	3	3	9	3
«Հացավան»	2	6	10	9
Ընդամենը	6	11	24	15

Իհարկե, այսքան փոքր ընտրանքի հիման վրա կատարված վիճակագրությունը չի կարող քիչ թե շատ ճիշտ զաղափար տալ խնդիրների ու պարագաների նախադաս կամ ետադաս կիրառության հաճախականության մասին: Բայց այստեղ կարևորն այն է, որ արձակ խոսքից բերված այս հատվածներում խնդիրներն ու պարագաները շարադասական տեսակետից գտնվում են իրենց բնական դրության մեջ, համապատասխանում են խոսքի սովորական ընթաց-

Հաշվի սեղ մտցված է նաև հարադրական բայերի հարադիրների շարադասությունը, որովհետև դրանք կարող են նաև բուն բայական ձևից ետադաս կիրառվել, օրինակ՝ Դուրս ելանց// ելանց դուրս: Նախադասության բաղադրի անդամները, օրինակ՝ Հագավ վերնաշապիկն ու դալիֆեն, հաշվված են մեկ միավոր:

բին, այսինքն՝ խնդիրների ու պարագաների և՛ նախադաս, և՛ հետադաս կիրառությունները սովորական և ոչ թե շրջում բառադասություններ են:

Քրականական առանձին աշխատություններում շարահասակա տեսակետից տարբերություն է դրվում խնդիրների և պարագաների միջև: Այսպես, Վ. Առաքելյանը, նշելով պարագաների համեմատաբար ազատ շարահասոթությունը, գրում է, թե «սովորական շարահասոթյամբ խնդիրները ընկնում են ստորոգյալից հետո»⁶, և գեղարվեստական դրականությունից բերում է այնպիսի օրինակներ, որոնցում խնդիրներն իրոք որ բայից հետադաս են, ինչպես՝ «Սի սե րյեղ գլորում է աղբի կլոր գունդը». «Դիլան դային կոխ է տալիս շոքաց» տերևները». «Կաթավները հավաքում էին ընկած հատիկները». «Հասավ յուր փափագին»: Դժվար չէ նկատել, որ այս բոլոր նախադասություններում խնդիրներն ազատ կերպով կարող էին շարահասովել նաև բայերից առաջ: Ե. Բաղդկյանը ևս, հավաստելով նույնը, գրում է. «Թեև բայական անդամի լրացումների շարահասոթությունը համեմատաբար ազատ է, բայց դրանց տարբեր խմբերում ևս գոյություն ունի շարահասոթյան տարբերություն. այսպես՝ խնդիրների շարահասոթությունը, ի տարբերություն պարագաների, գերազանցապես վերջադաս է»⁷ (ընդգծումը մերն է—Մ. Ա.):

Իրականում, սակայն, խնդիրների ու պարագաների միջև շարահասակա տեսակետից այնպիսի տարբերություն չկա, և խնդիրները ևս համարյա ազատորեն բայից և՛ նախադաս, և՛ հետադաս կարող են դրվել: Դեռ ավելին. մեր կատարած վիճակագրությունը ցույց է տալիս, որ, օրինակ, ուղիղ խնդրի նախադաս կիրառությունները բացարձակորեն գերակշռում են վերջադասներին: Վիճակագրությունը կատարված է հետևյալ կերպ: Վերցված են դասական և սովետական շրջանի 10 արձակ գործեր, որոնց սկզբից դուրս են դրված հանդիպած հարուրական բոլոր ուղիղ խնդիրները: Դրանց նախադաս և հետադաս կիրառության հաճախականությունը ներկայանում է հետևյալ տեսքով.

Ուղիղ խնդրի շարահասոթությունը բայի նկատմամբ

Մտեղծագործությունը	Նախադաս	Ետադաս	Ընդամենը
Պ. Պոռյան, «Սոս և Վարդիթեր»	79	21	100
Բաճի. «Սամվել»	39	61	100
Մուրադյան, «Դեղիկ Մարգարետին»	50	50	100
Նար-Դոս, «Մալ»	62	38	100
Հ. Թումանյան, «Գիրքորը»	88	12	100
Դ. Դեմիրճյան, «Վարդանանք»	42	58	100
Ա. Բակունց, «Միտ»	56	44	100
Ն. Զարյան, «Հացավան»	71	29	100
Սա. Զորյան, «Գրադարանի աղջիկը»	97	3	100
Ս. Խանդավյան, «Օտար հավեր»	66	34	100
Ընդամենը	650	350	1000

Երևան՝ ուղիղ խնդիրների նախադաս և հետադաս կիրառությունների մոտավոր հարաբերակցությունն է 2:1:

⁶ Վ. Առաքելյան. Հայերենի շարահասոթություն. Ա., Երևան, 1958, էջ 489:

⁷ Ե. Բաղդկյան. Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարահասոթությունը. Երևան, 1976, էջ 153:

⁸ Հաշվի մեջ ենթադրվում են նաև այսպես կոչված ներքին, այսինքն՝ հարադրական բայերի կազմում հանդես եկող ուղիղ խնդիրները, օրինակ՝ զոռժ անել: Բազմակի ուղիղ խնդիրները դեռևս անվիճելի են որպես մեկ միավոր:

Աղյուսակի տվյալները միաժամանակ ցույց են տալիս, որ ժողովրդախոսակցական ոճի ստեղծագործություններում, ինչպիսիք են, օրինակ, Պ. Պոռոշյանի «Սոս և Վարդիթերը», Հ. Թումանյանի «Գիքորը», Ստ. Զորյանի «Գրադարանի աղջիկը», ուղիղ խնդիրների նախադաս և ետադաս կիրառության այս միջին հաճախականությունը փոխվում է հօգուտ նրանց նախադաս կիրառության, իսկ բարձր ոճի գրական ստեղծագործություններում, ինչպիսիք են, օրինակ, Բաճեֆու «Սամվելը», Մուրացանի «Գեղորգ Մարգարտունին», Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», այս միջին հաճախականությունը փոխվում է հօգուտ նրանց ետադաս կիրառության:

Այսբանով փակելով ուղիղ խնդրի հարցը և կրկին ընդհանուր ձևով անդրադառնալով խնդիրների և պարագաների շարադասությանը՝ պետք է նշել հետևյալը: Աշխարհաբար բուն ժողովրդական խոսքին ընդհանրապես ավելի հատուկ է խնդիրների ու պարագաների նախադաս կիրառությունը:

Որ այս դրույթը ճիշտ է արտացոլում լեզվական տվյալ երևույթի իրական պատկերը, լավագույնս ցույց է տալիս հարադրական բայերի կազմության սկզբունքը: Ինչպես գիտենք, հարադրական բայերը բացառապես կազմվում են հարադիր (գոյական, մակբայ և այլն) + բայ կաղապարով, ինչպես՝ սիրտ անել, ականջ անել, գրույց անել, միտք անել, սիրտ տալ, գլուխ տալ, ձեռք փաշել, երդում ուտել, ուշքի գալ, ուշքի բերել, խելքի գալ, գլխի ընկնել, կողքի ընկնել, աչքի ընկնել, սևին տալ, կարմրին տալ, գրի առնել, աչքից ընկնել, մտքից ընկնել, ուժից ընկնել, ամոթով մնալ, աչքով տալ, աչքով անել, գլխով անել, տակով անել, ներս գալ, ներս մտնել, դուրս գալ, դուրս տալ, դուրս փաշել, մեջ գալ, մեջ ընկնել, մեջ մտնել, ետ գալ, ետ փաշել, ետ տալ, առաջ գալ, առաջ ընկնել, առաջ խաղալ, վրա գալ, վրա տալ, վրա հասնել, դեմ ընկնել, դեմ առնել, մոտ գալ, մոտ բերել, մոտ փաշել, շուտ գալ, շուտ բերել և այլն:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հարադրական բայերի բաղադրիչները վերջիվերջո «լրացում + լրացյալ» կապակցություններ են, այսինքն՝ «խնդիր կամ պարագա + բայ» կապակցություններ, ապա վստահորեն կարող ենք ասել, որ աշխարհաբար խոսքին ավելի հատուկ է խնդիրների և պարագաների նախադաս կիրառությունը:

Այս դրույթն է հաստատում նաև խնդիրների և պարագաների շարադասությունը առաջնություն ու ասացվածքներում: Դրանցում խնդիրների և պարագաների նախադաս կիրառության բացարձակ գերակշռությունն ակնհայտ ու անվիճելի է, ինչպես՝ «Երես տվին, աստառ ուզեց»։ «Քաղցր լեզուն օձը բնից կրահանի»։ «Հաց դնեմ՝ հասի, բան դնեմ՝ փախի»։ «Հրազը իր տակը լույս չի տա»։ «Շունը տերը չի ճանաչում»։ «Սևին սապոնն ինչ անի, խեղճ խրատն ինչ անի»։ «Առաջ միտք արա, հետո խոսք ասա»։ «Մի ձեռքով երկու ձվերով չեն բռնի»։ «Մուկը ծակը չի մտնում, ցախավելը պոչից են կապում»։ «Շան կաղալուն մի՛ հավատա»։ «Գդալով հավաքում է, շերեփով բաժանում»։ «Աչքը տեսածից է վախենում»։ «Էդ խմորը շատ ջուր կվերցնի»։ «Շան հետ ընկերացի՛, փետր ձեռքից մի՛ գցի»։ «Գիտունի հետ քա՛ր քա՛ղի, անգետի հետ փա՛լ մի՛ ուտի»։ «Անխելքի պարանով հորը մի՛ մտնի» և այլն:

Ինչևիցե. ժամանակակից գրական արևելահայերենը խնդիրների ու պարագաների շարադասության տեսակետից ներկայացնում է մի այնպիսի դրույթ, որ նրանց շարադասության համար դժվար է սահմանել քիչ թև շատ հաստատուն օրինաչափություններ, և խնդիրներն ու պարագաները, ինչպես նշված է արդեն, համարյա ազատորեն բայից և՛ նախադաս, և՛ ետադաս կառուցվում են կիրառվել:

Սակայն այս ազատության մեջ էլ ինչ-ինչ սահմանափակումներ կան և, կախված խոսքի բնույթից ու նպատակադրումից, տրամաբանական շեշտից, բայի լրացումների քանակից, երբեմն էլ նույնիսկ խնդրի որոշյալ կամ անորոշ լինելուց, տվյալ խնդիրը կամ պարագան առավելապես նախադաս կամ ետադաս կամ էլ հավասարապես և՛ նախադաս, և՛ ետադաս կարող է կիրառվել: Այս հարցերի մանրամասն քննությունն ու լուսաբանությունը պետք է կատարվի ոճաբանության մեջ:

РАСПОЛОЖЕНИЕ ПОДЛЕЖАЩЕГО И СКАЗУЕМОГО. ДОПОЛНЕНИИ И ОБСТОЯТЕЛЬСТВ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Доктор филол. наук М. Е. АСАТРЯН

Резюме

Армянский язык с его богатой системой падежных форм и служебных слов, а также форм спряжения, выражающих синтаксические отношения, относится к числу языков со свободным или почти свободным порядком слов, за отдельными исключениями. Это позволяет выражать одну и ту же мысль по-разному, меняя порядок слов, что влечет за собой изменение смысловых акцентов предложения. В современном армянском языке подлежащее обычно предшествует сказуемому, однако нередко сказуемое предшествует подлежащему. Предложения с инвертированной конструкцией «сказуемое + подлежащее» употребляются, как правило, в тех случаях, когда нужно заострить внимание на разворачивающихся друг за другом действиях и процессах. Для расположения дополнений и обстоятельств в современном литературном восточноармянском языке трудно установить какие-либо закономерности, поскольку они почти свободно могут употребляться и препозитивно, и постпозитивно по отношению к глаголу. Однако для исконного ашхарабара скорее характерна препозиция дополнений и обстоятельств. Это подтверждается абсолютной препозицией именной части составных глаголов, а также преобладанием препозиции дополнений и обстоятельств в пословицах и поговорках.